

ԾՐԱԳԻՐ

“ՆՈՐ ԱԿՈՒՆՔ” ՓԲԸ-ՈՒՄ 2005թ. ԱՊՐԻԼԻ 4-ԻՑ ՄԻՆԶԵՎ ԱՊՐԻԼԻ 23 -Ը ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

“Նոր-Ակունք” ՓԲԸ-ում մոնիթորինգն իրականացվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 12 հոկտեմբերի 2004 թվականի №128Ն որոշմամբ հաստատված ընկերության կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների (այսուհետև՝ նվազագույն պահանջներ) կատարումը ուսումնասիրելու նպատակով:

Մոնիթորինգի ընթացքում կուսումնասիրվեն.

1. Ընկերության լաբորատորիաների կողմից ջրի որակի ստուգումների կարգը (հաճախությունը, նմուշառման վայրը) և այդ տեղեկատվության գրանցման և պահպանման ձևերը: Հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային կենտրոնի հետ համագործակցությունը: Խմելու ջրի որակի “Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները: Որակի հսկողություն” №2-III-Ա 2-1 սանիտարական կանոններին և նորմերին (գրանցված է ՀՀ արդարադատության նախարարությունում 28.12.2002թ., №10002340) անհամապատասխանության դեպքերը (եթե այդպիսիք եղել են) և այդ իրավիճակներում կատարվելիք աշխատանքների ընթացակարգը (պահանջների 1, 10-րդ կետեր):
2. Ջրամատակարարման հաստատված գրաֆիկների առկայությունը (ըստ համայնքների, թաղամասերի, փողոցների) և դրանց համապատասխանությունը իրականությանը (պահանջների 2-րդ կետ):
3. Ջրամատակարարման գրաֆիկների փոփոխության յուրաքանչյուր դեպքի հիմնավորումը, դրանց մասին սպառողներին առնվազն 2 օր առաջ իրազեկելու գործընթացը (դրանք հավաստող փաստաթղթերի առկայությունը):
4. Բազմաբնակարան շենքերի և առանձնատների մուտքագծերում խմելու ջրի ճնշման համապատասխանությունը սահմանված պահանջներին:
5. Վթարային ծառայության, ինչպես նաև տարածքային սպասարկման հեռախոսահամարների և հասցեների վերաբերյալ սպառողների իրազեկությունը, իրազեկման մեխանիզմները: Ստացված ահազանգերի, բողոքների, հարցադրումների գրանցման համար հատուկ գրանցամատյանների առկայությունը, դրանցում գրանցված ահազանգերին, բողոքներին և հարցադրումներին տրված լուծումները և դրանց մասին սպառողների իրազեկումը:
6. Պլանային և վթարային աշխատանքների իրականացման դեպքերում սպառողներին և իրավական ակտերով սահմանված համապատասխան մարմիններին ջրամատակարարման դադարեցնելու և վերականգնման

Ժամկետների մասին իրազեկելու, այդ աշխատանքների համար սահմանված առավելագույն ժամկետների պահպանումը:

7. Խմելու ջրի մատակարարումը սահմանված ժամկետներում չվերականգնելու դեպքում ջրագրկված տարածքների սպառողներին անվճար խմելու ջուր մատակարարելու դեպքերը (եթե այդպիսիք եղել են): Ընկերության կատարված նախապատրաստական աշխատանքները՝ ի կատարումն պահանջների 4-րդ կետի:
8. Թերմատակարարված ջրի կամ նվազագույն պահանջների 1-ին կետին չհամապատասխանող խմելու ջուր մատակարարելու դիմաց սպառողների տվյալ ամսվա վճարման ենթակա գումարների նվազեցման դեպքեր (եթե այդպիսիք եղել են):